

ՀՀ Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

11 նոյեմբեր, 2014թ.

1. Քննարկումներ համայնքներում երիտասարդական խորհուրդներ ստեղծելու և երիտասարդական կենտրոններ բացելու մասին, որտեղ կարող են հավաքվել տարածաշրջանի ակտիվ երիտասարդները, կազմակերպել միջոցառումներ, կլոր-սեղաններ, սեմինարներ, մշակել և իրականացնել համայնքների երիտասարդական քաղաքականությունը, բարձրաձայնել երիտասարդներին հուզող հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացնել իրենց հարցերն ու առաջարկները ՀՀ Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդում՝ ներկայացուցչի միջոցով:
2. Քննարկումներ և առաջարկներ Հայաստանի 2015թ. երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի բացման միջոցառման և հետագա ծրագրերի շուրջ, ինչպես նաև Ստեփանավանի՝ արդեն ձևավորված երիտասարդական կենտրոնին գույքով և տեխնիկայով աջակցելու մասին, քանի որ կահավորված և տեխնիկապես զինված երիտասարդական կենտրոնի առկայությունը առաջնային ու հրատապ խնդիր է Ստեփանավանի երիտասարդության համար՝ երիտասարդական մայրաքաղաքի հետ կապված ծրագրերն ու միջոցառումները պլանավորելու և ըստ պատշաճի իրականացնելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ն. ԱՎԱԳՅԱՆ